

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՌԱՉԱՓ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.

ՆԵՐՔԻՆ ՎԱՐԱԳԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ  
Քերթմենջյան Դ. ( ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)

[dkertmen@yahoo.com](mailto:dkertmen@yahoo.com)

Բանալի բառեր՝ գմբեթ, վեղար, վանք, վերակազմություն, թմբուկ, սյուն:

**Թեմայի արդիականությունը.** ներկայումս հայկական ճարտարապետության գիտահետազոտության ամենահրատապ հարցերից է հին և նոր հուշարձանների եռաչափ գրադարանի կազմումը: Ընդ որում, այստեղ խոսքը երբեք չի վերաբերում հուշարձանների վերականգնմանը կամ հնագիտական վերակազմությանը, այլ՝ հայկական ճարտարապետության հուշարձանների հորինվածքային բնագրի վերարտադրմանը: Հարցի կապակցությամբ կարևորվում են հետևյալ երկու հանգամանքները.

1. Արդի հայկական ճարտարապետության էջերում կան բազմաթիվ կարևոր ստեղծագործություններ, որոնք կյանքի ուղղագիր չեն ստացել և դրանց համակարգչային եռաչափ վերակազմությունն ու հավելումն ուսումնասիրություններում՝ որպես մտավոր ժառանգություն, մեծ կարևորություն ունի՝ պատկերելու ժամանակի ճարտարապետության զարգացման հիմնահարցերը:

2. Նույնքան կարևոր է հայկական պատմական ճարտարապետության ուսումնասիրական իրավիճակի վերանայումն ու ներկայացումը՝ ըստ ընդգրկված շենքերի և անսամբլների հորինվածքային մոդելների: Փաստորեն, գոյություն ունեցող հուշարձանները, անցնելով բազմաթիվ ավերումներից և նորոգումներից, նյութական անցողիկ պայմանների հետևանքով չեն

վերականգնվել ըստ մասնագիտական պահանջների, այլ՝ ըստ ընձեռված հնարավորությունների, դեռևս չհաշված, որ դրանք հատկապես Արևմտյան Հայաստանի ներկա իրականությունում լքված են, և դրանց ճարտարապետական արժանիքներն ավերակ վիճակում խոսուն չեն:

**Նորույթը.** այսու՝ առաջին անգամ լինելով, առաջարկվում է հայկական ճարտարապետության գոյություն ունեցող պատմության և տեսության վերարտադրումը համակարգչային եռաչափ վերակազմությունների համադրությամբ, որ ավելի արտահայտիչ ու ըմբռնելի կդարձնի հայկական ճարտարապետության պատմական նվաճումներն ու զարգացման արդի հիմնահարցերը: Զեկուցման մեջ Վասպուրականի Ներքին Վարագավանքի օրինակով բարձրացվում է եռաչափ վերակազմության ասպեկտներից մեկը: Փաստորեն Վարագավանքը հայտնի է հատակագծային տվյալներով և մի քանի լուսանկարներով: Արդարև, 1648 թ. հայտնի երկրաչարժից հետո վանքը, ըստ արժանվույն, չի վերականգնվել: Դարպաս զանգակատան, գավթի, Սբ. Աստվածածնի տանիքներն ուղղակի պատվել են հողաշեն և հարթ՝ մի հանգամանք, որ հարագատ չէր կարող լինել վանքի ծավալատարածական բնագրային լուծումներին, որի պատճառով համալիրի ճարտարապետությունն իր իրական հորինվածքային արժանիքներից հեռացել է: Տվյալ իրավիճակը տիպական է Արևմտյան Հայաստանի համարյա ողջ ժառանգությանը, որոնք այսօր աղերսող ավերակներով լրացնում են ակնարկվող ուսումնասիրությունների էջերը:

**Գիտամեթոդական կարևորությունը.** համակարգչային եռաչափ վերակազմության մեթոդը գիտական նոր և անհրաժեշտ մոտեցում է, որն անհրաժեշտ է հետևողաբար ներմուծել հայկական ճարտարապետության գոյություն ունեցող ուսումնասիրություններում, մանավանդ, որ այն տեխնիկայի (մաստերինգ) առումով հայկական

ճարտարապետական ժառանգության ձևերի վերարտադրման կապակցությամբ մասնագիտական կատարելագործման ճանապարհ պետք է անցնի, որ կկատարվի տվյալ ծրագրի սահմաններում:

ABOUT 3-DIMENSIONAL RECONSTRUCTION OF ARMENIAN HISTORICAL  
COMPLEXES: THE RECONSTRUCTION OF NERKIN VARAGAVANK

Kertmenjian D. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts,  
Armenia)